ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ պրոռեկտոր

Է. Վ. Ասրիյան

29.01.2026

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Տիգրան Ալեքսանի Ալեքսանյանի «Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգը» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ատենախոսության մասին:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի 2026թ. հունվարի 29-ի նիստում քննարկվեց Տիգրան Ալեքսանի Ալեքսանյանի «Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգը» աշխատանքը պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Ավետիսյանը, ֆակուլտետի դեկան պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը, պ.գ.թ., ամբիոնի դասախոսներ Ա.Գնունին, Հ. Սիմոնյանը, Ա. Անանյանը, Լ. Աբրահամյանը, Գ. Շագոյանը, Ռ Ծատուրյանը, Հ. Հարությունյանը, Ա. Բոբոխյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Բոբոխյանը, Ռ. Ծատուրյանը, Գ. Շագոյանը:
Նիստի մասնակիցներն արձանագրեցին հետևյալը.

Տիգրան Ալեքսանի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է համեմատաբար քիչ ուսումնասիրված Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական կառույցների և պաշտպանական համակարգերի ուսումնասիրությանը: Հեղինակն ատենախոսության մեջ փորձել է հետազոտել և համակարգված ներկայացնել Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական կառույցները, դրանց մասին տվյալները, ուսումնասիրություններն ու հետազոտողների տարաբնույթ կարծիքները: Քննարկման նյութ է դարձել փաստագրված համալիրների կառուցապատման սկզբունքները, շինարարական և ժամանակագրական փուլերն ու ենթափուլերը, պատմական իրողությունների ընթացքը, աղբյուրագիտական և վիմագրական տեղեկությունները: Ատենախոսության

պահանջներին համապատասխան գիտական հանրությանն է ներկայացրել ուսումնասիրվող համալիրների լուսանկարները, չափագրությունները և պեղված հնագիտական տարբեր գտածոներ: Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրաշինական համակարգի ուսումնասիրությունն արդիական է և կարևոր: Այն իրականացվել է հետազոտական հատուկ մեթոդաբանությամբ՝ դաշտային աշխատանքների և պեղումների կազմակերպմամբ: Թեման հաստատվել և փորձաքննության է անցել ըստ գործող կարգի: Ներկայացված ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք և բովանդակություն: Բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

Մի շարք արժանիքների հետ միասին աշխատանքում կան բացթողումներ և սխալներ, որոնք բոլորովին չեն ստվերում ատենախոսության բովանդակությունը:

1. Աշխատանքի վերնագրում անհրաժեշտ էր նշել միջնադարի զարգացած ժամանակահատվածը, օրինակ՝ X-XIII դարեր:
2. Կարևոր է հստակեցնել ամրոց, բերդ, միջնաբերդ և քաղաք հասկացությունները, չնայած բնակավայրերի տիպերի մասին հեղինակը որոշ դիտարկումներ կատարել է: Կարելի էր օգտագործել Հակոբ Մանանդյանի աշխատությունները:
3. Լուսանկարները առատ են, իսկ գծանկարները՝ քիչ ներկայացված:
4. Կան համակարգային բացթողումներ և սխալներ:

Թեկնածուական ատենախոսությունը և սեղմագիրը համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման անվանացանկի Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությանը և հեղինակը լիովին արժանի է հայցած՝ պատմական գիտությունների թեկնածուի կոչման, ինչի համար ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, միջնորդում է մասնագիտական հանձնաժողովին:

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հ.Գ. Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար բ.գ.թ., դոց. Մ. Հովհաննիսյան

29.01.26թ.